

# ՍԵՊՏԵՄԲԵՐ 21

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆՔՆՈՒՄԻ ՏՕՆ

Բոլոր ժողովուրդներուն համար ամենէն հիմնական եւ առաջնահերթ նպատակ է իրենց երկրի ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ եւ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ:

Չկայ ժողովուրդ, որ իր քաղաքական ազատութեան եւ անկախութեան համար յարատեւ պայքարած եւ անոր հասնելու համար մեծ զոհողութիւններ կատարած չըլլայ:

Հայ ժողովուրդի պատմութեան մէջ, մենք ունեցած ենք ազատ եւ անկախ երկար դարեր Բ.ա. Է. դարէն մինչեւ Բ.ե. ԺԴ. դար:

### ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ունեցած ենք հետեւեալ թագաւորութիւնները.-

- Ուրարտական-Արմենական թագաւորութիւն՝ Բ.ա. Թ., Ը., Է. դարերուն:
- Երուանդունիներու թագաւորութիւն՝ Բ.ա. 2.էն Բ. դարերուն:
- Արտաշիսեան թագաւորութիւն՝ Բ.ա. 189էն մինչեւ Բ.ե. 1 թուականը:
- Արշակունեաց թագաւորութիւն՝ Բ.ե. 66էն 428 թուականը:
- Բագրատունեաց թագաւորութիւն՝ Բ.ե. 885էն 1045 թուականը:
- Կիլիկեան իշխանապետութիւն եւ թագաւորութիւն՝ Բ.ե. 1075էն 1198, եւ 1198էն 1375 թուականները:

Վերոյիշեալ թագաւորութիւններու ժամանակաշրջաններուն միջեւ եղած են դժուարիւն, խառնակ եւ անկանոն տարիներու ժամանակաշրջաններ, երբ օտար ուժեր պայքարած են հայկական անկախ իշխանութիւններուն դէմ:

Յիշեալ բոլոր թագաւորութիւններու տարիներուն, օտար կայսրութիւններ կամ բարբարոսական ուժեր նեղութիւն տուած են Հայաստանին եւ աշխատած են իրենց տիրապետութեան տակ առնել զայն:

Ամենէն վայրագ եւ քանդիչ ուժերը սակայն, եղան սելճուք, մոնկոլ-թաթար ցեղախումբերու յաջորդական արշաւանքները, 1064 թուականէն սկսեալ, որոնց վերջինը Թուրք-Օսմանեան կայսրութեան տիրապետութիւնն էր, ԺԵ. դարէն սկսեալ, մինչեւ Ի. դար:

Քսաներորդ դարու սկիզբը, Համաշխարհային Ա. ընդհանուր պատերազմը յարմար առիթ սեպելով, Թուրք-Օսմանեան կայսրութիւնը կազմակերպեց հայ ժողովուրդի ցեղասպանութիւնը: 1915ի Ապրիլ 24էն սկսեալ, բնաջնջեց հայութեան մեծ մասը եւ փոքր մասի մըն ալ պարտադրեց, որ լքելով իր պապենական հողերը, գաղթէ ուրիշ երկիրներ:

Հայ ժողովուրդը ենթարկուեցաւ թէ՛ մարդկային, թէ՛ մշակութային անչափելի վնասներու:

Ամայացաւ պատմական Հայաստանի մեծ մասը:

Այդ անմարդկային ոճիրներու յաջողութենէն ետք, Համաշխարհային Ա. պատերազմի վերջաւորութեան, թուրքերը որոշեցին Ռուսիոյ ենթակայ Հայաստանն ալ գրաւել եւ այդ շրջանի հայութիւնն ալ բնաջնջել: Պահը նպաստաւոր էր, որովհետեւ այդ նոյն ժամանակամիջոցին, Ռուսիոյ մէջ տեղի կ'ունենար համայնավարական յեղափոխութիւնը եւ ռուս բանակը կը սկսէր քաշուիլ հայկական հողերէն:

Այդ առիթով, տեղի ունեցան բուռն կռիւներ օսմանեան բանակին եւ հայ կամաւորական գունդերուն միջեւ:

Սաստիկ ճակատամարտներ տեղի ունեցան մանաւանդ Սարտարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսայի մէջ: Հպարտութեամբ պէտք է արձանագրել, որ հայեր յաղթական ելլելով այդ բախումներէն, 1918 Մայիս 28ին, առաջին անգամ ըլլալով, յայտարարեցին իրենց անկախութիւնը:

Հայոց պատմութեան մէջ, առաջին անգամ ըլլալով հիմը դրուեցաւ հանրապետական կարգով Հայաստանի մը (փոխան՝ թագաւորական կարգին):

1918 Մայիս 28ը դարձաւ հայութեան համար պատմական թուական եւ տօն՝ **Ազատ, Անկախ Հայաստանի Հանրապետութեան**:

1918ի Մայիս 28ին ստեղծուած անկախութիւնը սակայն, դժբախտաբար երկար չտեւեց, գլխաւորաբար հիմնական մէկ պատճառով.-

Համայնավարները իրենց ուժերը Ռուսիոյ մէջ վերջնականապէս հաստատելէ ետք, անգամ մը եւս իջան Կովկաս, գրաւեցին Վրաստանը, Ատրպէյճանը եւ ամենէն վերջ՝ նաեւ Հայաստանը (1920, Դեկտ. 2ին):

Վերջ գտաւ նորաստեղծ Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը, որ տրուած պայմաններուն մէջ, հազիւ երկուքուկէս տարի տեւեց:

Այդ թուականէն՝ 1920ի Դեկտեմբերէն սկսեալ, Հայաստան այլեւս անկախ պետութիւն չէր. դարձաւ մէկ մասը համայնավարական նոր կայսրութեան, որ կը կոչուէր Խորհրդային Միութիւն:

Շուտով յայտնի եղաւ, որ համայնավար վարչակարգը նոր տեսակի բռնապետութիւն էր: Այդ վարչակարգը ստեղծեց սարսափի մթնոլորտ: Մեծ թիւով հայրենասէր անձեր՝ բոլոր ազգութիւններէն, ահաբեկուեցան իրենց ազգասիրութեան պատճառով: Մեծ թիւով նշանաւոր գրողներ, արուեստագետներ եւ ընկերային գործիչներ աքսորուեցան ռուսական Սիպերեական տարածութիւններ եւ անոնց մեծ մասը անհետ կորսուեցաւ...:

Համայնավարութեան տիրապետութեան տարիներուն, Հայաստանի մէջ, թէեւ քաղաքաշինութիւնը զարգացաւ, եւ քաջալերուեցան ուսումը, արուեստներն ու գիտութիւնը, բայց մտաւորականութիւնը եւ ժողովրդային զանգուածները միշտ մնացին դժգոհ, որովհետեւ նոր բռնատիրութիւնը խլած էր իրենց եւ երկրին ազատութիւնն ու անկախութիւնը:

Սակայն, ինչպես որ պատմության մեջ որեւէ բռնապետութիւն տեւական բնոյթ ունեցած չէ, համայնավարութիւնն ալ վերջ մը պիտի ունենար:

Նոր բռնապետութիւնը՝ համայնավարութիւնը, որ 1917 թուականէն սկսեալ իր տիրապետութեան տակ առած էր Ռուսիան եւ 15 այլ երկիրներ, ներառեալ արեւելեան Յայաստանը, սկսաւ տկարանալ եւ քայքայուիլ 1987 թուականէն սկսեալ:

Խորհրդային Միութեան մաս կազմող պետութիւնները մէկ-մէկ սկսան բաժնուիլ անկէ եւ յայտարարել իրենց ազատութիւնն ու անկախութիւնը:

Կարգը հասած էր հայ ժողովուրդին եւ Յայաստանին:

Քաղաքական նորաստեղծ, դժուարին եւ կասկածելի կացութեան մեջ, 1991ին ամբողջ ժողովուրդին համար հարց էր՝

ԲԱԺՆՈՒԻ՞Ն ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵՆԵՆ, ԹԵ՛՛ ՈՉ:

Արդարեւ, Սեպտեմբեր 21ին տեղի ունեցաւ հանրաքուէ:

Ժողովուրդը խումներամ դիմելով դէպի քուէատուփերը, միաձայնութեամբ որոշեց՝ բաժնուիլ Խորհրդային Միութենէն, եւ յայտարարել՝ Ազատ, Անկախ Յայաստանի Հանրապետութիւն, այնպէս՝ ինչպէս 1918ի Մայիս 28ով ստեղծուած Հանրապետութիւնը:

1991 ՍԵՊՏԵՄԲԵՐ 21 թուականը դարձաւ հայ ժողովուրդի ժամանակակից պատմութեան նոր անկիւնադարձ եւ պատմական կարեւոր թուական:

Վերականգնեցաւ Հայաստանի Հանրապետութեան Անկախութիւնը:

Այդ շրջանին, Յայաստանի բնակչութեան թիւն էր՝ 3,750,000 տարածուած մօտ 30,000 քառ. քմ. տարածքի վրայ:

Շուտով վերականգնեցան Յայաստանի միջազգային իրաւական իրաւունքները, իբր անկախ պետութիւն.-

- Հաստատուեցաւ հայկական Եռագոյնը (կարմիր, կապոյտ, նարնջագոյն) իբրեւ Յայաստանի դրօշ:
- Վերստին որդեգրուեցան »Մեր Հայրենիք«ը իբրեւ պետական հիմն, իսկ առիժով ու արծիւով խորհրդանշուող զինանշանը իբրեւ պետութեան գերբ
- Զանի մը ամիսէն բազմաթիւ պետութիւններ ճանչցան Հայկական Հանրապետութեան իրողութիւնը եւ դեսպաններ փոխանակեցին պետութենէ պետութիւն:
- Միացեալ Ազգերու կազմակերպութեան կեդրոնատեղիին վրայ (Նիւ Եորք), բազմաթիւ անկախ երկիրներու շարքին, Փետրուար 1992ին սկսաւ ծածանիլ նաեւ Յայաստանի դրօշը:

Հայկական մեր դպրոցը այս առիթով օր մը փակելով իր դռները, պատգամ մըն է, որ կ'ուղղէ ծնողներուն եւ ժողովուրդին, թէ՛

- Պատմական այնքան դժուարին ժամանակներէ ետք, ներկայիս, մանաւանդ նոր սերունդին եւ ուսանողութեան համար, հպարտութիւն է ու

պատիւ, որ կայացած է այլեւս Ազատ եւ Անկախ Հայաստանի  
Հանրապետութիւնը:

Օր մը արձակուրդ առնելով, ամէն աշակերտ, իր հայրենասիրութիւնը եւ  
հպարտութիւնը արդարացնելու համար, կ'որոշէ իր արդար եւ անկեղծ  
մասնակցութիւնը բերել հայրենիքի հզօրացման համար թափուող ճիգերուն:

**ՍԵՊՏԵՄԲԵՐ 21, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆՔՆՈՒՄԻ ՏՕՆ**  
Նիւթեր՝ Մանկապարտեզ, Առաջին եւ Երկրորդ դասարաններուն համար

## Ազատութի՛նս

Ես կը սիրեմ իմ մայրիկս,  
Կը սիրեմ շատ իմ հայրիկս.  
Կը սիրեմ ես իմ մայր լեզուս  
Մեծ ժառանգը իմ պապերուս:

Գիտե՞ք սակայն, որ դեռ իմ մէջ  
Կայ անառիկ սեր մը եւս.  
Այդ՝ իմ սերն է հայրենիքիս  
Ազատ, Անկախ Հայաստանին:

## Մեր Ուխտը

Հայաստան, մեր մայր երկիր,  
Մենք հպարտ ենք անկախութեամբ.  
Դուն ուրախ ես մեզմով Ազատ,  
Մենք պիտ' պահենք քեզ միշտ Անկախ:

Մենք կը յիշենք մեծ անցեալդ,  
Մեր պապերուն սուրբ կտակը,  
Կ'ուխտենք ըլլալ հաւատարիմ,  
Դառնալ սիւներ Հայաստանին:

## Երգ Ազատութեան

### ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

Ազատն Աստուած այն օրից,  
Երբ հաճեցաւ շունչ փչել,  
Իմ հողանիւթ շինուածքին  
Կենդանութիւն պարգեւել,  
Ես անբարբառ մի մանուկ՝  
Երկու ձեռքս պարզեցի  
Եւ իմ անզօր թելերով  
Ազատութիւն գրկեցի:

Մինչ գիշերը, անհանգիստ,  
Օրօրոցում կապկապած,  
Լալիս էի անդադար  
Մօրս քունը խանգարած,  
Բազուկներս արծակել,  
Ես այն օրից ուխտեցի՝  
Ազատութիւնը սիրել:

Թոթով լեզուիս մինչ կապեր  
Արծակուեցան, բազմացան,  
Մինչ ծնողքս իմ ձայնից  
Խնդացին ու բերկրեցան,  
Նախկին խօսքն որ ասեցի՝  
Չէր հայր, կամ մայր, կամ այլ ինչ՝  
Ազատութի՛ւն, դուրս թռաւ  
Իմ մանկական բերանից:

»Ազատութի՛ւն«, ինձ կրկնեց  
Ճակատագիրն վերելից.  
»Ազատութեա՞ն« դու զինուոր  
Կամիս գրուիլ այս օրից:  
Ո՛հ փշոտ է ճանապարհը.  
Քեզ շատ փորձանք կը սպասէ.  
Ազատութիւն սիրողին  
Այս աշխարհը խիստ նեղ է«:

- Ազատութի՛ւն,- գոչեցի,-  
Թող որոտայ իմ գլխին  
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ.  
Թող դաւ դնէ թշնամին,  
Ես մինչ ի մահ, կախաղան,  
Մինչեւ անարգ մահու սիւն  
Պիտի գոռամ, պիտ՛ կրկնեմ  
Անդադար՝ Ազատութի՛ւն:

**ՍԵՊՏԵՄԲԵՐ 21, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆՔՆՈՒՄԻ ՏՕՆ**  
Նիւթեր՝ Երրորդ, Չորրորդ եւ Հինգերորդ դասարաններուն համար

## Կեանքից Թանկ Բանը

### ԱԻԵՏԻՔ ԻՍԱՅԱԿԵԱՆ

Վայրի աղանին՝ կուրծքը վիրաւոր՝  
Ընկել էր մենակ աղբիւրի եզրին,  
Ծորում էր շիթ-շիթ արիւնը բոսոր  
Մեռնում էր, աչքը՝ ջրի երագին:

Քնքուշ պարիկը տեսաւ դալկահար  
Մեռնող աղանուն եւ խօսեց այսպէս.  
- Տո՛ւր ինձ այն, ինչ որ թանկ է քեզ համար,  
Է՛ն թանկագինը, կեանք տամ իսկոյն քեզ:

Մեռնող աղանին խորհում էր ինքնին.  
»Էն թանկագինը՝ կեանքն է անպատճառ,  
Ա՛խ, ծաղրում է ինձ աղբիւրի ոգին«:  
- Էհ, լա՛ւ, թո՛ղ լինի, տո՛ւր եւ նորից ա՛ռ:

Պարիկը ցօղեր սրսկեց վերքին,  
Աղանին բացեց աչքերը ոսկի  
Ու թելին տալով ծափեց ինդագին.  
- Ե՞րբ կ'ուզես կեանքս, նազելի ոգի:

- Թեւե՛րդ կ'ուզեմ, կեանքդ քեզ լինի:  
- Թեւե՛րս...ի՞նչպէս, ո՛հ, երբե՛ք, երբե՛ք,  
Առանց թռիչքի կեանքը գին չունի.  
Կեանքս առ,- թռչունն ասաց սրտաբեկ:

- Թռի՛ր, սիրելի՛ս, ազատ ու վայրի.  
Թռի՛ր ու ասա՛ ստրուկ աշխարհքին,  
Թէ ի՞նչն է թանկը կեանքից անելի...  
Ասաց ջրերի լուսեղէն ոգին:

### ԲԱՌԱՐԱՆ

- 1.- Ծորիլ.- կաթիլ-կաթիլ թափիլ, հոսիլ, թորիլ:
- 2.- Բոսոր.- վառ կարմիր, ծիրանագոյն, արիւնագոյն:
- 3.- Պարիկ.- առասպելական բարի ոգի, յաւերժահարս:
- 4.- Դալկահար.- տժգոյն, գունատ, դեղնած:
- 5.- Նազելի.- շնորհալի, վայելուչ, յուսահատ:
- 6.- սրտաբեկ.- սիրտը կտրած, վիատած, յուսահատ:

**ՍԵՊՏԵՄԲԵՐ 21, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆՔՆՈՒՄԻ ՏՕՆ**  
Նիւթեր՝ Վեցերորդ, Եօթերորդ եւ Ութերորդ դասարաններուն համար

## ՁՕՆ՝ Նորանկախ Հայաստանին

### ԿԱՐՕ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Ողջոյն սիրոյ յաւերժական Մայր Հայաստան  
Չաւակներուդ երգը լուսէ աղօթք լցուն  
Արեգակին անհունութեամբ եւ բարութեամբ  
Քեզի ընծայ խաղաղութիւն ամենեցուն:

Ողջոյն, ողջոյն՝ Արմենական երկիր սիրոյ  
Յոյսի ճամբորդ մեծ եզերքի զաւակներէդ.  
Դուն միշտ եղար, յար կը մնաս ինչպէս կանթեղ  
Արագածի, իբրեւ գագաթ մեծ Մասիսի:

Յաւերժ ապրող հոգիին պէս, իբրեւ փիւնիկ  
Դուն յար կ'ապրիս վերականգնած նոր ժառանգորդ  
Արտաշիսեանց, Արշակունեաց, Բագրատունեաց,  
Սարտարապատ տասնեւութէն իննըսուն մէկ:

Ողջոյն երիցս հռչակագրով դուն նորացած  
Նոր Նայիրի Մայր Հայաստան անկախացած  
Քու նոր երթիդ, քու մեծ փառքիդ ամենուրեք  
Բռունցքացած կ'ուխտեն ըլլալ հանուր հայերն:

Հոկտ. 1991

## Ուիլերմ Սարոյեան (1908-1981)

... Կը յիշեմ զինք հսկայ չինարի մը տակ, խոտին վրայ նստած բարեկամներու հետ խօսելու պահուն: . . . Նկարներու եւ արուեստի հազուագիւտ իրերու հարուստ վաճառական մըն էր, որ եկեր էր Նիւ Եորքէն եւ գործով Չինաստան ու Հնդկաստան կ'երթար: Այս մարդը ուզեց գիտնալ, թէ ինչո՞ւ ոստիկեանը, աշխարհի բոլոր տեղերը թողած, Ֆրեզնոն էր ընտրեր իր կեանքի վերջին տարիները անցընելու համար: Ոստիկեանը նայեցաւ անոր եւ ժպտեցաւ:

- Որսորդ մը,- ըսաւ ան,- թակարդով շատ գեղեցիկ թռչուն մը բռնեց, այնքան գեղեցիկ, որ ինքնիրեն մտածեց. »Մեղք է այսպիսի արարածի մը կեանքին վերջ տալ: Տուն կը տանիմ, անոր համար սքանչելի վանդակ մը կը շինեմ, ուտելիք ու ջուր կու տամ եւ ամբողջ սրտով կը սիրեմ զայն, քանի որ ես նման ուրիշ թռչուն չեմ տեսեր«:

Որսորդը թակարդէն ազատեց թռչունը, շոյեց անոր փետուրները, քնքուշ եւ սիրալիր խօսքեր ըսաւ անոր եւ զայն տուն տարաւ: Թռչունին համար գեղեցիկ վանդակ մը շինեց, զայն մէջը դրաւ, հատիկ ու ջուր տուաւ անոր: Ամբողջ մէկ տարի այսպէս պահեց, բայց ամէն երեկոյ, երբ տուն կու գար եւ կը մօտենար վանդակին, կը լսեր թռչունին հառաչը. »Ա՛խ, հայրենիք«:

- Թռչո՞ւն, ըսէ՛ ինձի, ո՞ւր է քու հայրենիքդ, որուն կարօտը կը քաշես դուն այդպէս վշտագին:

- Երթա՛նք՝ քեզի ցոյց տամ,- պատասխանեց թռչունը:

Որսորդը բացաւ վանդակին դուռը, եւ թռչունը դուրս թռաւ: Ան սկսաւ թռչիլ, եւ որսորդը հետեւեցաւ անոր... Ամբողջ ամիս մը ան թռաւ, եւ որսորդը գնաց անոր ետեւէն, մինչեւ որ թռչունը հասաւ այնպիսի ամայի, տաք, չոր, ծայրուտ ու անբերրի վայր մը, որ կարծես աշխարհի ծայրը ըլլար:

Թռչունը նստաւ փոքր ու չոր ծառի մը վրայ, որ փուշերով եւ փոքր ու փխրուն տերեւներով ծածկուած էր, եւ ըսաւ որսորդին.

- Ահա՛, այս է իմ հայրենիքս:

### ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

- Ինչո՞ւ բանտարկուած թռչունը վանդակին մէջ անընդհատ »Ա՛խ, հայրենիք« կը հառաչէր:

- Ո՞րն էր թռչունին հայրենիքը:

- Ի՞նչ խոհեր կ'արթնցնէ փոքրիկ թռչունին վարմունքը: